

Ապա գոռաջիւք մեծ աղաղակաւ,
Ասելով չէր է Պատրիարք մեր լաւ,
Տառապանք նորա՝ մեզ վիշտ է եւ ցաւ,
Վատաց արարմանց չախորժիմք բընաւ:

Եկեսցէ ի յայտ՝ կացցէ յաթոռ իւր,
Վըստա՛հ հովուեսցէ 'յմեզ իւրաքանչիւր,
Պատրաստ եմք ահա՛, հալածել 'ղ քիւթիւր
Եւ զիւր համախոհս՝ թէ եւ իցեն բիւր:

Արդ՝ այս ինչ այսպէս ճարտար տրամադրեալ,
Յաջող կատարիւր ի պահ ժամագրեալ,
Կողմին քիւթիւրին յայնց յոյժ երկուցեալ,
Դադարիւր շըփոթ ազգիս տագնապեալ:

Յետ որոյ Յօհան Պատրիարք արգոյ,
Դառնայր ի յարկ իւր՝ փառօք եւ տիր գոհ,
Որ գովեալ սերտիւ՝ զորդիս իւր հաճոյ,
Ամբէր 'ղ նոսին, որք էին դժգոհ:

Բայց կընքեալ իմ զայս կարծ միջարկութիւն,
Դարձայց վերըստին առ իմ պատմութիւն,
Ձի մի՛ երկարելս իցէ ձանձրութիւն
Ընթերցողաց զայս պարզ երգերգութիւն ր:

Ծանօթ. — Այս տողեր արժէքաւոր են Առլոտի նկատմամբ. բայց, գծախտաբար, Նուրտինեան իր Վարդապետը գովելու յայտնի չափազանցութիւններ ունի, որոնց աւելի փայլուն գոյն մը տալու համար կը տկարացնէ Շղթայակրի եւ մասնաւորապէս Նալեանի ջանքերուն ազդեցութիւնն ու արդիւնքը՝ Առլոտի պաշտպանութեան մէջ: Արդէն իր բոլոր գրուածին մէջ Նալեանի դէմ հակակրութիւն մը ունի՝ Նուրտինեան եւ իր զարմանալի հակասութիւններով, որոնց վրայ չանդրադառնար, կ'ուզէ հաստատել նախանձ մը եւ թշնամութիւն մը Նալեանի կողմէն, դէպ ի Սարգիս եպիսկոպոս: Պէտք է նաեւ դիտել տամ ընթերցողներու՝ Նուրտինեանի սխալ մեկնութիւնը Առլոտի ներողամիտ վարմունքի մասին՝ Փռանկութեան հրահուտ խնդիրներուն մէջ: